

ՆՇԱՆԱԿՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ
ԿՅԱՆՔԸ

ԿԼԵՎԵՆՍԿԻ

ԴՈՐԻՈՒՅՈՒԲՈՎ

89171 092

Դ-66

ՊԵՏՅՐԱՏ



19 NOV 2010

ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԿՅԱՆՔԸ

**Ն. Ա.
ԴՈՔՐՈԼՅՈՒԲՈՎ**
1836 – 1861



ՅԵՐԵՎԱՆ 1939

ԿԼԵՎԵՆՍԿԻ

891.71.092 47.

7-66

ԴՈՔՐՈԼՅՈՒԲՈՎ



ՊԵՏԶՈՍ
ՀԼԿՅԵՄԿԿԿԻՑ ՄԱՆԿՊԱՏ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

22 MAY 2013

13016



3192-79

Клебенски
Добролюбов
Гиз. Арм. ССР, Ереван, 1939 г.

«Ո՛ր, ինչպես նա քեզ սիրում էր, ժողովուրդ: Նրա
խոսքերը քեզ չեյին հասնում, բայց լերը դու կդառնաս
այն, ինչ վոր նա ցանկանում էր քեզ տեսնել, դու կիմա-
նաս, քե վորքան շատ բան արեց քեզ համար այդ հան-
նարեղ պատանին, քո գավակներից լավագույնը»:

Ն. Գ. ԶԵՐՆԻՇԵՎՍԿԻ

Ն. Ա. ԴՈՐՐՈՂՅՈՒԲՈՎ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

I

Նիկոլայ Ալեքսանդրովիչ Դորրոյուբովը հոգեփորական ծագում ունեւր, նրա հայրը նիժեգորոդյան հոգեփորականութեան աչքի ընկնող անդամն էր, քաղաքում հարգված մարդ էր, վսչ միայն հոգեփորականութեան մեջ, այլև ազնվական-չինովնիկական շրջաններում: Նա ունեւր սեփական գրադարան, ավելի քան 650 հատոր հոգևոր և աշխարհիկ բովանդակութեան գրքերով:

Ն. Ա. Դորրոյուբովը ծնվել է 1836 թվի հունվարի 24-ին (նոր տոմարով՝ փետրվարի 5-ին): Նրա մանկութեան առաջին տղավորութեանները կապված էյին մոր՝ դեպի նա ունեցած քնքույշ սիրո հետ, վորին նա վճարում էր նույնպիսի զգացմունքներով:

Հայրը տղայից հեռու չեր կանգնած: Զբաղված իր ծառայութեան գործերով և ընտանիքի բարեկեցութեան հոգսերով՝ նա իր բնավորութեամբ ևս յերեխաների մեջ մոտիկութեան զգացմունք չեր առաջացնում:

Լինելով լուրջ և պահանջկոտ, նա իր ծնողական պարտքն էր համարում վորդուն խրատներ կարգել, և հաճախ այդ բանը նա անում էր տհաճ տոնով:

Սխալ կլինե՞ր ասել, վոր Դորբոլյուբովներ ընտանիքում տիրում էր դաժան ուժով և վոր տղան տանջվում էր դաժան, բռնակալ հոր ձեռքում: Սակայն անաղատության, հոր առաջ կաշկանդվածության զգացմունքը վորդու մեջ զարգացնում էր ամաչկոտություն վոչ միայն հոր, այլև ուրիշների նկատմամբ: Այդ ամաչկոտության մասին, վոր յերկշոտության սխալ ապավորություն էր ստեղծել խոսում են մանկության տարիքից Դորբոլյուբովին ճանաչող մի շարք մարդիկ:

Մոր առաջին դասերից հետո, վորը վորդուն կարգալ սովորեցրեց, նրա համար կանոնավոր պարապմունքներ սկսվեցին ութ և կես տարեկան հասակից: 1844 թվից Դորբոլյուբովին սովորեցնում էր սեմինարիստ Մ. Կոստրովը, վորը նրա հետ անցավ հոգևոր ուսումնարանի ստորին դասարանների դասընթացը: Պահպանված պատմություններից դատելով՝ Կոստրովը անգիր անելու հետևից չէր ընկնում, այլ աշխատում էր աշակերտի ինքնագործունեյությունը զարթեցնել:

1847 թվին, Դորբոլյուբովը, տասներկու տարեկան հասակում, ուղղակի մտավ հոգևոր ուսումնարանի չորրորդ, վերջին դասարանը: Դասարանում ամենափոքրահասակը լինելով, Դորբոլյուբովը բոլոր աշակերտների մեջ աչքի չէր ընկնում իր պատրաստվածությամբ և կարգացած լինելով: Մի տարուց հետո նա հոգևոր դպրոցն ավարտեց բոլոր առարկաներից ա-

մենաբարձր թվանշանով և 1848 թվին մտավ Նիժնի-Նովգորոդի հոգևոր սեմինարիան: Նրա առաջադիմությունն անխախտ շարունակ շատ բարձր էր:

Սեմինարական շրջանում Դորբոլյուբովի վարքի թվանշանները չեղել են որինակելի և բարեբարո աշակերտի տիպիկ թվանշաններ: Մենք հանդիպում ենք այսպիսի բնութագրերի. «Աչքի յե ընկնում հանդատությամբ, համեստությամբ և հնազանդությամբ», «Պարապմունքներում աչքի չե ընկնում անխոնջությամբ»:

Դործին բարեխիղճ վերաբերմունք ունենալով՝ Դորբոլյուբովը հավասարապես պարապում էր բոլոր առարկաներով, վոր սեմինարական դասընթացում քիչ չեղին, զրում էր 35 և ավելի թերթից շարադրություններ, բայց սեմինարական պարապմունքներն համարում էր բթացնող և ձանձրալի, իր ուսուցիչների նկատմամբ անկեղծ արհամարհանք էր զգում:

Սեմինարիայում նա մոտիկ բարեկամներ չուներ, վորոնց հետ նա կարողանար ապրել սրտակից կերպով, միայն բարձր դասարաններում կալին յերկու-յերեք հոգի, վորոնց հետ նա ավելի շատ էր շփվում, քան մյուսների հետ: Նրա կանացի արտաքինի և կենցաղային միամտության համար ընկերները նրան «ինսուտիտուտկա» անունն էլին տվել:

«Իսկ յե՞րբ և զալու իսկական ուրը» հոգվածում մտցված և իբր թե Դորբոլյուբովի ծանոթի պատմությունը իր զարգացման մասին: Այդ «ծանոթը» (ինքը Դորբոլյուբովը) զպրոցում տասներկու տարեկան հասակից որինականության մի սոսկալի պարտիզան էր, համակված ամենախորհարգանքով դեպի ավագ-

ների կամքը: «Ծիշտն ասած՝ որենքը նա դեռ իրեն
ախնքան ել լավ չեր պատկերացնում, բայց նրա հա-
մար, համենայն դեպս, որենքը մարմնավորված եր
հանձինս իշխանավորներին և ավագներին: Այդ պատ-
ճառով ել նա իր կյանքի այդ տարիներին շարունակ
ուսուցիչներին, պետերին և մյուսներին կողմն եր և իշխա-
նավորներն ու դասաւաններին ավագները նրան շատ
եկին սիրում»: Տասչորս տարեկան հասակում ավագ-
ների հեղինակության առաջ այդ խոհարարի վեր-
ջացավ, սակայն, ընկերներին հետ մերձեցում տեղի
չունեցավ:

Ընկերների մեջ միայնակ լինելով, Դորրոյուբովը
փնտռում եր մի մարդ, վորի վրա կարողանար թա-
փել իր քնքշանքը: Այդ վորոնումները յերբեմն ման-
կական սիրահարվածության ձև ելին ստանում: Յերբ
Դորրոյուբովը տասներկու տարեկան եր, նա սիրա-
հարվեց տասներկու տարեկան Ֆենիչկա Շչեպոտյե-
վային, հասարակական ավելի բարձր շրջանի պատ-
կանող մի աղջկա, քան ինքն եր, յերիտասարդ սեմի-
նարիստը: Դեպի նա տածած իր պարզ և մաքուր զգաց-
մունքի մասին նա գեղեցիկ կեցավով պատմել և իր
«որագրում»:

1852 թ. եր, վոր Դորրոյուբովը հափշտակվեց
ուսուցիչ Ի. Մ. Սլադկոպեկևով, Յերիտասարդ ուսու-
ցիչը սեմինարիայում իր յերեւու մոմենտից հենց
գերեց Դորրոյուբովին: Դորրոյուբովը հաճախ լինում
եր նրա մոտ, իսկ յերբ Սլադկոպեկևին Տամբով տե-
ղափոխեցին, Դորրոյուբովը սաստիկ դառնացել եր
և իր զգացումն «որագրում» արտահայտեց այսպիսի
արտահայտություններով. «... Ի՜նչ անե՞ծքներ, ի՜նչ

բառեր կարտահայտեն այն, ինչ վոր յես զգում եմ
այժմ իմ հոգու խորքում... Սատանան գիտի, թե յես
հիմա ինչեր կանեյի, շուռ կտայի ամբողջ աշխարհը,
աչքերը կհանեյի, կծելով կկտրեյի այն սրիկայի, այն
անզգամի մատները, ով ստորագրել և իվան Մաք-
սիմովիչի արձակման թուղթը»:

Ծանոթությունը Սլադկոպեկևի հետ—դա Դոր-
րոյուբովին սեմինարական տարիներում մարդկանց հետ
մերձենալու փորձաթիվ փորձերից մեկն եր: Այն միջա-
վայրը, վոր նա հանդիպում եր իր տանը, Դորրոյուբով-
ների ազգականներն ու ծանոթները հոգևորական և
չինովնիկական շրջանից, նրա հետաքրքրությունն ու
համակրանքը բոլորովին չեյին վայելում: Ֆենիչկայից
բաժանվելով Դորրոյուբովը գրում և որագրում. «Յիվ
նորից յես դատապարտված եմ շփվել այս կեղտոտ
հորձանքում, այս անլվա, չմաքրված դեմքերի մեջ,
պեղանո վաբմունքների, կոպիտ հնարների և դոհնիկ
սրախոսությունների այս խեղդուկ մթնոլորտում»:

Հասարակական մյուս շրջանը, վորի հետ յերե-
խա և պատանի Դորրոյուբովն ստիպված եր հանդի-
պել—ազնվականության և նահանգական բավականին
խոշոր չինովնիկության շրջանը—յերբեմն նրան դրա-
վել եր թվում, բայց այդ շրջանի մեջ ավելի սերտ
մտնելու փորձերի ժամանակ նա իրեն զգում եր վոր-
պես պլերեյ, անհարմար և ոտար:

Դորրոյուբովն ամփոփվում եր ինքն իր մեջ,
ապրում իր ներքին աշխարհով, իր խոր ապրումներն
արտահայտելու համար սիրով դիմում եր իր որա-
գրերին:

«Որագրերից» և մեմուարային գրականությունից

յերևում ե, վոր պատանի Դորբուլուբովը խիստ կրո-
նասեր եր: Սակայն արդեն սեմինարիայում պատա-
նու կրոնական տրամադրության մեջ սկսեցին ճեղք-
վածքներ յերևալ: Տասնյոթ տարեկան հասակին մոտ
այդ բնագավառում շատ բան արդեն խախտված եր:

Պատանի Դորբուլուբովի կրոնականութունն իր
հիմքում յեկեղեցական բնույթ չեր կրում, այլ բա-
րոյական: Որը՝ բարոյական բնավորության գծերը,
վոր խիստ ե դեպի իր սեփական վարմունքը, Դորբու-
լուբովի մեջ փնացին նաև այն ժամանակ, յերբ նա
հավատացյալ մարդուց դառավ համոզված աթեիստ:

Յերիսասարդ Դորբուլուբովի ներքին կյանքում
ամենամեծ գերը խաղացին գրքերը: Յեվ ինքն իր
մասին, և՛ նրա բոլոր ճանաչողները միաձայն ասում
են, վոր նա համարյա իր ամբողջ ժամանակն ընթեր-
ցանությամբ եր անցկացնում: Դորբուլուբովը գրում
եր. «Դասերի հիմար սերտունքն ինձ չեր հաջողվում,
ինձ ավելի շատ դուր եր գալիս գրքեր կարդալը, և
շուտով այն դարձավ իմ գլխավոր զբաղմունքը և միակ
վայելքն ու հանգիստը սեմինարական դատարկ և ձանձ-
րալի պարապմունքներից: Յես կարդում եյի ամեն
բան, ինչ վոր ձեռքս եր ընկնում. պատմություն, ճա-
նապարհորդություններ, գատողություններ, ներբող-
ներ, պոեմներ, վեպեր, — ամենից շատ վեպեր: Սկսած
Ժանիսից և Ռատկլիֆից մինչև Դյումա և Ժորժ Զանդ
և Կարամզինից մինչև Դոգոլ ներառյալ, բոլորը յես
կլանեցի մի արատսովոր ազահությամբ: Այս հինգ
տարվա ընթացքում համարյա միայն այս եր, վոր
յես անում եյի»:

Դորբուլուբովը գրքեր ճարում եր, վորտեղից վոր

կարդանում եր, իր բոլոր ազդականներից և ծանոթ-
ներից: 1852 թվին այն մարդկանց թիվը, վորոնցից նա
գիրք եր վերցնում, հասնում եր մի քանի տասնյակի:
Զարմանալի չե, վոր գրքի հետևից այդքան ընկնելու
դեպքում քիչ չեյին կարդացված նաև իսկական ան-
պետք գրքեր:

Դորբուլուբովի ընթերցանության մեջ մեծ տեղ
եյին բռնում ժուռնալները, վոր նա սովորաբար
կարդում եր առաջին եջից մինչև վերջինը:

Կարդացած նյութի մեջ առաջին տեղն անկոտկած
գրավում եր գեղարվեստական գրականությունը: Սե-
մինարիայում Դորբուլուբովը կարողացավ չափազանց
հիմնավորապես ծանոթանալ ռուսաց գրականության
հետ: Նա կարդացել եր Պուշկինին, Լերմոնտովին,
Դոգոլին, Կոլցովին, Լաժնյեիկովին, Զագոսկինին,
Ն. Ֆ. Պավլովին, Բուլգարինին, Կուկոլնիկին, Դրեչին,
Դալին, Դրեբենկին, Վելոմանին, Մասալսկուն, Ժու-
կովին, Վոսկրեսենսկուն, Բենեդիկտովին, Ն. Պոլեոյին,
Ի. Կոզլովին, Խմելնիցկուն, Ռաստոպչինին, Նարեժ-
նուն, Պոդոլինսկուն, Դերժավինին, Ի. Ֆ. Բոգդանովի-
չին, և ուրիշներին: Ոտարազգի գրողներից՝ Վալտեր
Սկոտտին, Ժորժ Զանդին, Ալ. Դյումային, Յեվգենի
Սյուն, Կշիկեյին, Շեքսպիրին, Դյուկեր-Դյումենիլին,
Շպինդլերին, Պոլ-Դեկոկին, Սիլվիո Պելլեկոյին, Պոլ
Ֆեվալին, Ալֆրեդին, Թեկկերեյին և ուրիշներին:

Բացի գեղարվեստական գրականությունից նա
կարդացել եր՝ Ն. Պոլեոյի «Պյոտր Մեծի պատմու-
թյունը», Կոնիի «Ֆրիդրիխ Մեծի պատմությունը»,
Բեկկերի «Հին պատմությունը», նույնի «Միջին դարե-
րի պատմությունը». Լորենցի «Ընդհանուր պատմու-

թյունը», Կեղերովի «Բնության փրկիստփայլության փորձը», Տերեչենկոյի «Ռուս ժողովրդի կենցաղը» և այլն: Դորբոլյուբովը կարգում եր նաև զանազան գրվածքներ, այսպես կոչված «յեկեղեցու հայրերի» աշխատությունները, յեկեղեցական խրատներ, զանազան սրբերի կենսագրություններ և այլն:

Սեմինարիայում Դորբոլյուբովը չափազանց շատ եր կարգում, բայց այդ ընթերցանությունն անկանոն եր և վոչ վոք այն չեք զեկավարում: Այնուամենայնիվ այդ ընթերցանությունը նրան շատ բան արվեց—ամենից առաջ ուսաց գրականության սքանչելի ծանոթություն, վորի վրա զարմանում էյին նրա ինչպես սեմինարական, այնպես ել մանկավարժական ինստիտուտի ընկերները: Յեվ յեթե սկզբում քննադատական վերաբերմունքը կարգացածի նկատմամբ հանգում եր համարյա կարգացած բոլոր գործերի անխոր գովաբանության, ապա նրա մեջ աստիճանաբար հասունանում եր իսկական քննադատական միտքը:

Սեմինարական տարիներին են վերաբերում նաև Դորբոլյուբովի ինքնուրույն գրական աշխատանքի առաջին փորձերը: Նա բավականին վաղ սկսեց վտանավորներ գրել, և քիչ չեք գրում, թեև իր ստեղծագործությունն ինքը քիչ եր գնահատում և նշանակություն չեք տալիս: 1850 թվին Դորբոլյուբովն հրատարակեց դպրոցական «Ախինեյա»¹⁾ ձեռագիր ժուռնալի առաջին համարը:

Շատ վաղ հասակից Դորբոլյուբովն սկսեց փորձեր անել ընկնելու մամուլի ասպարեզ: 1850 թ. վերջին,

այսինքն յերը նրա տասնհինգ տարին դեռ չեք լրացել, նա „Москвитянин“ ժուռնալի խմբագրությանն ուղարկում ե մի քանի վտանավոր, միամտորեն առաջարկելով, վոր կուղարկի ևս վոչ պակաս 30 վտանավորից, յեթե նրան գրա համար տան 100 ռուբլի: Վտանավորներն, ի հարկե, չտպագրվեցին, ինչպես և 12 ուրիշ վտանավորները, վոր 1852 թվին «Վլադիմիր Լենկի» ստորագրությամբ ուղարկել եր «Сын отечества» ժուռնալին: Նույնպես անհաջող եր Դորբոլյուբովի փորձը դառնալու տեղական նահանգական լրատուի աշխատակից, վորին նա ուղարկել եր յերեք փոքրիկ հոդված:

Այդ փորձերի անհաջողությունը նրան գրական ասպարեզից չստեղծեց, սեմինարական շրջանի վերջին նա ապագայում իրեն համար վորոշակիորեն գծագրեց գրական գործունեության նվիրվելու ծրագիր:

Դորբոլյուբովի արտաքին դեպքերով աղքատ կյանքի սեմինարական շրջանը հարուստ եր ներքին բովանդակությամբ: Կենտրոնացած ինքն իր մեջ, ազահարար անձնատուր յեղած ինքնակրթության, հարուստ ձիրքերի տեք պատանին իր կյանքի տասնընչորս և տասնհինգ տարիների միջև ճգնաժամ ե ապրում, վորի հետևանքով պետերին և ավագներին հնազանդ լինելու նախկին փրկիստփայլությունից նա մեծ քայլ ե անում դեպի «Մարդը և նրա յերջանկությունը», «Վերապետի բոլորի համար լավ լինի» ֆորմուլան, վորը հետագայում նրա համար դարձավ դեկավոր սկզբունք: Դորբոլյուբովն հաղթահարեց նաև ուսման տիկական-սանտիմենտալ տրամադրությունը, վոր հատուկ եր նրան տասնհինգ-տասնվեց տարեկան հա-

¹⁾ Ахинея—Բանդադուշանք, անհեթեթ բան Մ. Թ.:

սակում: Տասնյոթ տարեկան հասակում պատանեկական վերամբարձ ռոմանտիզմը Դոբրոլյուբովի համար արդեն անցած աստիճան էր:

Նիժնի-Նովգորոդյան շրջանի վերջում Դոբրոլյուբովի բնավորության մեջ գոյանում է մի գիծ, վորի համար թշնամիները հետադաշում նրան անսիրտ և չոր եյին անվանում. ասենք, ինքն ել հաճախ իր մասին խոսում էր վորպես «փայտյա», սառն մարդու մասին, ընդգծելով, վոր նա լալ չի կարողանում, վոր նրան ոտար են սրտի զեղումները, զգայականությունը և այլն: Դոբրոլյուբովի այդ սառնությունն ու «փայտյա» լինելը կատարյալ թյուրիմացություն է: «Որագրում» 1852 թ. նոյեմբերի 11-ին Դոբրոլյուբովը գրում է իր մասին. «Յես ծնվել եմ չափազանց համակրող սրտով. պատահում էր, վոր կարեկցություն արցունքներն ամենից հաճախ եյին հոսում իմ աչքերից: Յես առանց սիրո, առանց վորեւ մեկին կապվելու չեյի կարող ապրել: Դա այնպես էր, վոր յես ինձ չեմ հիշում... Յեւ զեռ ինձ սառնասիրտ, համարյա ֆլեզմատիկ մարդ են համարում... Այնինչ այդ մշտական անտարբերությունն սառն կեղևի տակ թաքնվում են ամենաբացավառ զգացմունքները, ամենամոլեգին կրքերը»: Սա արտահայտված է մի փոքր ռոմանտիկ-վերամբարձ տոնով, վոչ առանց լերմոնտովյան պոեզիայի ազդեցության, բայց ըստ եյության Դոբրոլյուբովը կատարելապես իրավացի չէ: Նա իսկապես շատ բարի և զգայուն սիրտ ուներ, ինչպես մանկություն հասակում, այնպես ել ավելի հասուն տարիքում, բայց նրա մեջ վաղ յերևաց զղվանք դեպի ամեն մի զգայուն ֆրագ, ինչպես իր, այնպես ել ուրիշներին մեջ

և մշակվեց ձգտումն պահպանելու արտաքինից սառնահանգիստ տեսք, ինչ ել վոր սրտում կատարվելիս լինելու: Ոգտվելով գերմանացի քննադատ Բեքնեյի հայտնի արտահայտություն, կարելի չէ ասել, վոր նա իր սիրտը շրջապատեց փշալարի բարձր ցանկապատով, վորպեսզի այնտեղ անասուն ներս չմտնի:

II

1852 թվի աշնանից Դոբրոլյուբովը շատ մտածեց բարձրագույն ուսումնական հաստատություն մը անելու մասին: Նա ցանկանում էր մտնել Պետերբուրգի համալսարանը, բայց հայրը վճռականորեն հայտարարեց, վոր նա վորդուն համալսարանում պահելու համար միջոցներ չուներ: Դոբրոլյուբովը հոգեկան ծանր անկումն ապրեց, բայց մի տարի ևս իրեն համար անելի դարձած սեմինարիայում մնալու մտքի հետ չը հաշտվեց: Սլադկոպեկի խորհրդով նա հոր հետ խոսեց Պետերբուրգի հոգևոր ճեմարանը մտնելու մասին և ստացավ նրա համաձայնությունը: Յերկար գլխացավանքներից հետո Դոբրոլյուբովին թույլ տվին առանց սեմինարիան ավարտելու քննություն տալ ճեմարան մտելու համար: 1853 թվի աշնանը յերիտասարդը մեկնեց Պետերբուրգ:

Պետերբուրգում Դոբրոլյուբովը իմացավ, վոր հեշտություն բարելի է մտնել Գլխավոր Մանկավարժական Ինստիտուտ, վորովհետև այնտեղ մտնել ցանկացողներ քիչ են յեղել և նախատեսվում էր թերահավաք: Հոգևոր ճեմարանից ազատվելու և, ինչպես ասում էյին, համալսարանին հավասարագոր և միաժա-



մանակ ուսանողներին պետական ապրուստ տվող ուսումնական հաստատություն մտնելու գալթակղությունը խիստ մեծ եր: Դոբրոլյուբովը վճռեց իր բախտը փորձել, տվեց ընդունելություն քննությունը և ընդունվեց պատմա-բանասիրական ֆակուլտետ:

Դոբրոլյուբովի առաջին հաղորդումները ծնողներին ինստիտուտի և այնտեղ տիրող կարգերի մասին խանդավառ բնույթ ելին կրում: Նա իր պրոֆեսորների անունները հալարտությունը եր տալիս, կատարելապես զոհ եր ինստիտուտի պարապմունքներից, ուսանողների ապրուստից և ընդհանրապես ամեն ինչից: Բայց շատ շուտով ինստիտուտի կյանքի նրա նկարագրությունների մեջ սկսում են քննադատական նոթեր յերևալ: Իր ինստիտուտական կյանքի առաջին տարվա ընթացքում Դոբրոլյուբովը լիովին ըստ արժանվույն գնահատեց այն հաստատությունը, վոբոտեղ ինքն ընկել եր:

Ինստիտուտի, փակ ուսումնական հաստատություն գլուխ, վոր գիմնադրայի ուսուցիչներ եր պատրաստում, կանգնած եր Ի. Ի. Դավիդովը—«Վանկան», ինչպես սովորաբար նրա հետեից ասում ելին ուսանողները,—Մոսկվայի նախկին պրոֆեսորը, վոր մի արհամարհված անձնավորություն եր և ստոր կարյերիս: Պատմա-բանասիրական ֆակուլտետի դասընթացը համալսարանականից շատ քիչ եր տարբերվում, և դասատուները մասամբ համալսարանի պրոֆեսորներ ելին, բաց դասավանդումը զրված եր աշակերտական ձևով, և ինստիտուտի կյանքի ամբողջ կառուցվածքը գորանոցային եր: Այնպիսի շնորհալի մարդն, ինչպիսին Դոբրոլյուբովը եր, հնարավորու-

թյուն եր գտնում ինքնուրույն պարապմունքերի համար հաճախել Հանրային գրադարանը, բայց միջին ընդունակությունների տեր ուսանողների ամբողջ ժամանակը գնում եր հաջորդ որվա պարապմունքներին նախապատրաստվելու վրա: Առաքյալներ և ավետարանի ամենորյա ընթերցանությունը, աղոթքները նախաճաշից և ճաշից առաջ,—սա բնորոշ ե այն կեղծ բարեպաշտական վոգու համար, վոր ինստիտուտում մտցրել եր բարձր էշխանություն այն քծնելով բարձրանալ ցանկացող Դավիդովը: «Ճիշտն ասած՝ այստեղ բարեպաշտությունն ավելի շատ ե, քան ճեմարանում»,—գրում եր Դոբրոլյուբովը իր ծնողներին:

Համարյա ամբողջ առաջին տարին Դոբրոլյուբովը ինստիտուտում իրեն առանձնացած, մենակ եր պահում, այնպես վոր շատերին նույնիսկ թվում եր «խորհրդավոր անձնավորություն», և ամբողջ ժամանակը գրքերով եր անցկացնում:

Առաջին տարվա վերջին Դոբրոլյուբովը իր վրա դարձրեց ընկերների ուշադրությունը: Նրա գրական ընդունակությունները շատ շուտով գնահատվեցին. նա աչքի ընկավ նաև ուսաց գրականությունից փայլուն դասախոսություններ կազմելու կարողությամբ և լուրջ շարադրություններով, վոր նա տալիս եր պրոֆեսորներին: Յերը ուսանողական գրույցները քաղքենիական թեմաներից անցնում ելին գրական դատողություններին, «Դոբրոլյուբովը ցույց տվեց այնպիսի կարգացածություն, վորպիսին դժվար եր յենթադրել մի սեմինարիստի համար, և ջերմ համոզմունքի ուլժ, և անվստահություն դեպի կաֆեդրայից ասված խոս-

քերը»: Վերջինս չափազանց նշանակալից է, այն պատանինների մեջ, վորոնք իրենց միջավայրից ստացել էին ստրկական խոնարհում պաշտոնական հեղինակությունների հանդեպ, Դորբոյլըրովը զարգացնում էր քննադատության վողի և կարծիքի ինքնուրույնություն: Նրա ընկերը, Ա. Պ. Զլատովրատսկին, ապում է, վոր Դորբոյլըրովը կազմում էր խիստ սրամիտ պարողխաներ անշնորհք պրոֆեսորների դասախոսությունների վրա, վորոնք ուսանողական միջավայրում մեծ հաջողություն ունեյին և տարածվում էին ամբողջ ինստիտուտում:

1854 թ. գարնանը Դորբոյլըրովին սարսափելի դժբախտություն վիճակվեց՝ նրա մայրը մեռավ ծննդաբերությունից: Դորբոյլըրովին՝ հորն ու ազգականներին գրած այդ ժամանակվա նամակները լի չեն ցնցող վըլտով: Իր «Որագրում» նա գրում է «Մայր իմ, սիրելիս, թանգադինս, քեզնով յես զրկվեցի ամեն ինչից: Տեսնում ես, յես լաց եմ լինում... Ծանր է, դառն է ինձ համար... Մթթե մեր մեջ յեղած տարածությունն այնքան անանցանելի յե, վոր մայրական սիրտն անգամ չի լաի տանջվող վորդու պաղատանքները... Իմ դրությունն այնքան դառն է, այնքան սոսկալի, այնքան հուսահատական, վոր յերկրիս վրա ինձ այժմ վոչինչ միխթարել չի կարող»:

Մոր մահվան առթիվ Դորբոյլըրովը կոչ է անում աստծուն, բայց պարզ չեբեում է, վոր նրա կրոնականությանը մեծ հարված է հասցված: «Յես հազվադեպ եմ կարողանում աղոթել, յես չափազանց դառնացած եմ»,—գրում է նա իր ազգականին:

Այդ ծանր ժամանակ Դորբոյլըրովին բարոյական

մեծ ոժանդակութուն ցույց տվեց նրա ինստիտուտական ընկերներից մեկը, Դ. Ֆ. Շչեգլովը: Նա Դորբոյլըրովից անբաժան էր, հաճախ նրան տանում էր ինստիտուտից և նրա հետ ժամերով զրոսնում էր Նեվայի ափին, լսելով նրա պատմածները մոր մասին և միխթարելով նրան:

Աթեիստոբեն տրամադրված Շչեգլովը ջախջախում էր իր ընկերոջ կրոնական հայացքները: Սկզբնական շրջանում Դորբոյլըրովը պայքարում էր, վորձում էր պաշտպանել իր սովորական մտքերը, բայց շատ շուտով հասկացավ, վոր Շչեգլովին իրավացի չեր: Դորբոյլըրովին ինքն ընդունում էր, վոր Շչեգլովի հետ ունեցած բարեկամությունը նրա մտավոր կյանքին վճռական խթան հանդիսացավ:

Հրաշալի կերպով բռնելով յերկրորդ կուրս փոխադրվելու քննությունները, Դորբոյլըրովին ամառը մեկնեց Նիժնի-Նովգորոդ: Արձակուրդների վերջին նրան նոր դժբախտություն հասավ՝ անսպասելի մեռավ նրա հայրը (խուբրայից):

Յերիտասարդ ուսանողը դարձավ մի ամբողջ ընտանիքի գլուխ, նա ուներ յերկու յեղրայր և հինգ քույր, վորոնցից ամենափոքր քույրը հինգ ամսական էր: Հորից հետո հարստություն չմնաց: Դորբոյլըրովի տունը ծանրաբեռնված էր զգալի պետական պարտքով, մնում էին նաև մասնավոր պարտքեր:

Առաջին մոմենտին Դորբոյլըրովին թվում էր, թե ինքը պետք է մնա Նիժնի-Նովգորոդում, վորպեսզի ուսուցչի պաշտոն գտնելով, կերակրի ընտանիքը: Բարեբախտաբար, նրա ազգականներն ու մերձավորները թույլ չավին, վոր նա այդ հուսահատա-

կան քայլն անի: Վորրերի վրա խնամակալությունն նշանակվեց, աղգականներն ու ծանոթները յերեխաներին վերցրին իրենց մոտ, և Դորրոլլուրովը կարող եր գնալ իր ուսումը շարունակելու:

Պետերբուրգ գալուց հետո շատ շուտով նրա նախկին կրոնականությունից վոչինչ չմնաց: Դորրոլլուրովի հետադաշում գրած «Памяти отца» վոտանավորում նա իր աշխարհայացքի բեկումը վորոշակիորեն կապում է իր հոր մահվան հետ.

Благословен тот час печальный,
Когда ошибок детских мгла
Вслед колесницы погребальной
С души озлобленной сошла.

Բայց այս բեկումն, ի հարկե, գծագրվում եր առաջ: Ապրած կորուստից հետո Դորրոլլուրովը գրեց իր «Որագրում».
«Ինձ սոսկալի դժբախտություն է պատահել՝ հորս և մորս մահը, բայց դա վերջնականապես հաւնոգեց ինձ, վառ իմ գործն առդար ե, վոր գոյությունն չունենա այն ուրվականները, վոր իր համար ստեղծում եր արևելյան յերևակայությունը և վորոնք բունի կերպով, հակառակ առողջ դատողության, մեր վզին են փաթաթում: Դա ինձ կատաղեցրեց այն խորհրդավոր ուշփի դեմ, վորը մեղ մոտ համարձակվում են անվանել բարի և վորոքմած, ուշադրությունն չըդարձնելով այն կարիքի վրա, վոր ցրված է աշխարհում, այն դժոխ հարվածների վրա, վոր այդ ուշփն ուղղում է հենց իրեն, այդ ուշփին գովերգողների դեմ: Ուշադրություն ենք հրավիրում մեր ընդգծած բառերի վրա. նրանք ասում են, վոր ընտանեկան դժբախ-

տությունը հանդիսացավ վերջնական խթան Դորրոլլուրովի մտքի այն քննադատական աշխատանքի համար, վոր կատարվում եր նաև առաջ:

Նոր ուսումնական տարվա սկզբից ինստիտուտում սկսվեց Դորրոլլուրովի մերձեցումը ընկերներին հետ և նրա ակտիվ մասնակցությունը ուսանողական հասարակացությանը: Դորրոլլուրովի կուրսի ուսանողների մեջ ամենաառաջավոր ուսանողներից աստիճանաբար կազմվեց մի խմբակ:

Բացի Դորրոլլուրովից և Շչեգլովից այդ խմբակի անդամներն էին Մ. Ի. Շեմանովսկին, Ի. Ի. Պորֆնիցկին, Ն. Պ. Տուրչանինովը, Ա. Պ. Չլատովրատսկին, Ի. Ի. Բորգուզովը, Ա. Ռադոնսկին, Բ. Ի. Սցիբորսկին, Սիդորովը և ուրիշները:

Սկզբում խմբակում ղեկավար դեր եր խաղում Շչեգլովը: Քաղաքականության, փիլիսոփայության և կրոնի բնագավառում Շչեգլովն աչքի չեր ընկնում ամենածայրահեղ հայացքներով: Բայց ուլտրա-հեղափոխական արտաքինի տակ թագնված եր բուրժուական ռադիկալիզմ, և այն ել շատ մակերեսային ռադիկալիզմ: Ինստիտուտի բարձր կուրսերում Դորրոլլուրովը Շչեգլովից բաժանվեց:

Խմբակում սկզբում ամենից շատ հետաքրքրվում էին կրոնական հարցերով, ջախջախում էին հավատալիքները: Հետո անցան հասարակական հարցերին:

1854 թ. վերջից Դորրոլլուրովն սկսում է գրել քաղաքական բովանդակությամբ վոտանավորներ, վորոնք սովորության համար չեյին: Նրանցից մի քանիսը ձեռագրով տարածվում էին Պետերբուրգում և

հաջողութիւնն ունեցին: Այդպիսի առաջին փորձերէից մեկի համար, «На 50-летний юбилей его превосходительства Николая Ивановича Греча» վոտանավորի համար Դոբրոլյուբովը քիչ մնաց տուեց: Դավիդովին լուր հասավ, թե այդ համարձակ վոտանավորի հեղինակը Դոբրոլյուբովն է: Ինստիտուտի իշխանութիւնը նրա մոտ խուզարկութիւն կատարեց, Դոբրոլյուբովին կարցեր նստեցրին: Դավիդովն սպառնում էր վռնդել ինստիտուտից, սպառնում էր նույնիսկ Սիբիրով... Պատանուն պաշտպանեցին պրոֆեսորները. Դավիդովի իրեն համար ել ձեռնտու չէր այդ պատմութիւնը չափազանցացնել, և Դոբրոլյուբովն ազատվեց փոթորկից:

Ինստիտուտային կյանքի վերջին յերկու տարում Դոբրոլյուբովի պայքարը Դավիդովի դեմ չէր զաղարում:

Վերջին ուսումնական տարվա սկզբին Դոբրոլյուբովն իր բոլոր ընկերներին անունից դիրեկտորին խնդրեք տվեց ուսանողական ճաշը բարեկամելու միջոցների մասին: Դավիդովի հետ դեմ առ դեմ խոսելուց հետո Դոբրոլյուբովը դուրս յեկավ ամբողջովին գունատ և իսկույն գնաց Պ. Ս. Վյազեմսկու մոտ (Պուշկինյան ժամանակաշրջանի բանաստեղծ), վորն այն ժամանակ ժողովրդական լուսավորութեան միջնադարի ողնակն էր, խնդրելու, վորպեսզի իրեն իսկույն բաց թողնեն վորպես կրտսեր ուսուցիչ: Չնայած Վյազեմսկու համոզելուն, նա մի քանի որ հետո այնուամենայնիվ խնդրեք տվեց, վորի մեջ մատնանշելով իր հարաբերութիւնները դիրեկտորի հետ և վերջինիս սպառնալիքները՝ հենց առաջին հանդիպած դեպքում վռնդել

ինստիտուտից, միջնորդում էր փոխադրել իրեն համալսարան, պահպանելով թոշակը, կամ արձակել կրտսեր ուսուցչի կոչումով: Վյազեմսկին խնդրեց ընթացք չտվեց, և գործն այդպես ել անցավ:

Իր և Դավիդովի հարաբերութիւնների առթիվ Դոբրոլյուբովն 1857 թ. ապրիլին գրած իր նամակներից մեկում ասում է. «Այն բոլոր պատմութիւններից հետո, վորոնցով յես իմ իշխանավորներին տհաճութիւն պատճառեցի, նրանք ուրախ կլինեցին ուղարկել ինձ Իրկուտսկ կամ Կոլա, և վոչ թե թողնել Պետերբուրգում: Դիրեկտորն արդեն վաղուց ձգտում էր վռնդել ինձ, բայց պրոֆեսորները թույլ չտվին: Չէ՞ վոր դա իմ սովորական պատմութիւնն է. թունդ ազատամտութիւն, անհնազանդութիւն իշխանութեանը, բայց և միաժամանակ գերազանց առաջադիմութիւն և անբասիր բարոյականութիւն մնացած բոլոր բաներում»:

Դոբրոլյուբովի ուսումնական առաջադիմութիւններն իսկապես վոր աչքի ընկնող էին: Նա պրոֆեսորներին ներկայացրեց մի շարք աշխատանքներ, վորոնք, նրանց կարծիքով, անկասկած գիտական նշանակութիւն ունեցին:

Դոբրոլյուբովի համար այս պաշտոնական ուսումնից ավելի կարևոր էին նրա ինքնակրթական ամենալարված աշխատանքի արդյունքները: Շէնգլովի հետ մերձեցնալուց հետո իսկույն և յեթ նա նորից կարդաց Բելինսկուն, վորի հետ առաջին ծանոթութիւնը վերաբերում էր դեռ ևս սեմինարական տարիներին: Նոր հայացքների լույսի տակ, վոր Դոբրոլյուբովը ձեռք էր բերել, Բելինսկին նոր ձևով հետա-

քրքիր և նշանակալից յերևաց: Այնուհետև, ինքնուրույն կերպով ֆրանսերեն լեզուն ուսումնասիրելով, Դորբոլյուբովը շատ կարգաց ֆրանսիական գրականությունից. որինակ, հայտնի յե, վոր նա կարդացել էր Ռուսսոյին և Պրուդոնին: Այսպիսով, նա թեպէտ իր ֆրանսիական ուստպիական սոցիալիզմի գաղափարների շրջանը: Դորբոլյուբովի հայացքների վրա ամենահզոր ազդեցութիւնը գործեց ծանոթութիւնը Բրուսս Բաուերի, Շտրաուսի և Ֆոյերբախի գրվածքների հետ: Վերոհիշյալ գերմանացի գրողներին կարդում էին նաև ինստիտուտական խմբակում: Գերմաներեն լեզուն չիմացողների համար թարգմանվում էին: Դորբոլյուբովի թղթերի մեջ պահպանվել է Ֆոյերբախի լեզու գրվածքների ուսուբեհն թարգմանության սկիզբը:

Դորբոլյուբովին ժամանակակից ուսու գրողներից, մինչև Չերնիշևսկու հետ ծանոթանալը, նրա վրա ամենից մեծ ազդեցութիւն թողել է Գերցենը: Նրա „Полярная Звезда“-ն, „О развитии революционных идей в России“-ն և մյուսները Դորբոլյուբովը կարդում էր հափշտակութամբ և ուղղակի յերկուշաբթի յառաջը: հեղինակի նկարով, վորպէս թանգագին մարդու նկարով, նա հիանում էր:

1855 թ. հարկավոր է նշել Դորբոլյուբովի գրական փորձերը: Այդ տարվա ամառը նա „Современник“-ի խմբագրութեանն հանձնեց իր գրած պատմվածքը: Պատմվածքը հետ վերադարձվեց, բայց Դորբոլյուբովի վրա ուշադրութիւն դարձրեց Նեկրասովը, վորն ապշել էր նրա զարգացմամբ և գրականութեան լավ ճանաչողութեամբ: 1855 թ. սեպտեմ-

բերի 1-ից Դորբոլյուբովն ինստիտուտում սկսեց «հրատարակել» ձեռագիր «Լուբեր» („СЛУХИ“) թերթը: Այդ թերթն ընդամենը (նրա 1856 թ. շարունակութեան հետ միասին «Բամբասանքներ»-„Сплетни“ անունով) լույս տեսավ 19 համար: Դրանցից Դորբոլյուբովը գրել էր 14 համար: «Լուբերում» զուտ ինստիտուտական գործերից նա անցավ ընդհանուր քաղաքականութեան հարցերին և մի շարք լեզվերում դրսևելուց իր հեղափոխական տրամադրութիւնը:

Դորբոլյուբովի կյանքում ամենամեծ կարեորութիւն ունեցող զեպքը՝ նրա ծանոթութիւնը Ն. Գ. Չերնիշևսկու հետ, — վերաբերում է 1856 թվի առաջին կիսին: Յերբ „Современник“-ի 1855 թ. գեկտեմբերի գրքում Ն. Գ. Չերնիշևսկին սկսեց տպագրել իր „Очерки гоголевского периода русской литературы“ հոգվածը, ապա հեղինակի անունը յերիտատարութեան մեջ, այդ թվում և ինստիտուտական խմբակում, միանգամից ջերմ համակրանք ձեռք բերեց:

1856 թվի ամառը Դորբոլյուբովն անց էր կացնում Պետերբուրգում, և նրա մերձեցումը Չերնիշևսկու հետ շատ արագ առաջ էր գնում: Արդեն ոգոտոսի 1-ին նա Տուրչանինովին գրում է, վոր Չերնիշևսկուն ալելի ու ալելի յե մոտենում և նրան ալելի ու ալելի յե գնահատում: Նրա մոտ գալով, նա մոռանում էր ժամանակը, Չերնիշևսկու մոտ մնում էր ճաշի, յերբեմն հունիսի քնելու: «Գիտես, այդ մեկ մարդը կարող է մարդկութեան հետ հաշտեցնել մարդկանց, վորոնք ամենից շատ են դաժանացած կենցաղային զարշիւթիւթիւններից: Այդքան ազնիվ սեր գեպի մարդը, այդքան վսեմութիւն ձգտումներում և արտա-

հայտնի ապագա, առանց ֆրադյուրուիթյան, այդքան խիստ հետևողական խելք, համակված սիրով դեպի ճշմարտությունը,—յես վոչ միայն չեյի գտնում, այլ և չեյի լեռնազրում գտնել: Պատանու այդ զգացմունքին Չերնիշևսկին պատասխանում էր նույնպիսի սիրով և հարգանքով: Նրանց մեջ հաստատվեց ամենախոր բարեկամություն, վորը մնաց ընդմիջառ:

Ինստիտուտում մնալու վերջին տարում (1856—1857) Դոբրոլյուբովի իր խմբակի անդամների և ընդհանրապես ինստիտուտի ուսանողների մեջ բռնեց բացառիկ աչքի ընկնող դիրք: «Այդ ժամանակ մեզանից ամեն մեկը,—ասում է Շեմանովսկին,—նրա վրա նայում էր վորպես մեզանից բոլորիցս ամենաշնորհալու վրա, պարզասրտորեն խոստովանում էր նրա գերազանցությունը, ամեն մի գործով դիմում էր նրա խորհրդին,—այն ժամանակ բոլոր ուսանողներն իսկապես սիրում էին այդ հզոր և տաղանդավոր բնավորությանը, իսկ մեր խմբակը պարզապես նրանով հպարտանում էր: Հաճախ նրան համեմատում էին պրոֆեսորների հետ, այդ համեմատությունը մեր յերիտասարդ սրտերը հպարտությամբ եր լցնում»: Ուսանող Կոնոպասևիչը հաղորդեց Չերնիշևսկուն, վոր իր կուրսում Նիկոլայ Ալեքսանդրովիչի ազդեցությունն ավելի ուժեղ էր, քան պրոֆեսորների ազդեցությունը:

Խմբակի անդամ Ռադոնեժսկին, խոսելով ընկերների մեջ Դոբրոլյուբովի ունեցած բացառիկ բարձր դիրքի մասին, մտցնում է մի շատ կարևոր մանրամասնություն. «Յեթե Դոբրոլյուբովին սիրում էյին վոչ բոլորը, բոլորը չեյին համաձայնում նրա հետ,

սակա հաստատապես ասում եմ, վոր բոլորը նրան հարգում էյին»: Իսկ ինչո՞ւ բոլորը չեյին սիրում: Դա բացատրվում է Ռադոնեժսկու հետագա խոսքերով. «Նրա վճիռներում շատ բան խիստ էր ու կծու, բայց այդ համոզմունքները նրա սեփականն էյին,—այդ հուրը, այդ անկեղծ շիտակությունը անմոռաց Դոբրոլյուբովի ազնիվ բնավորության մշտական անփոփոխ սեփականությունն էր կազմում, վոր խորապես վիրավորված էր այն ամենով, ինչ վոր նրա համոզմունքով բարիք և ճշմարտություն չեր»: «Դոբրոլյուբովի իր հակակրանքը յերբեք և դեպի ամեն վոճ չեր թագցնում»,—շարունակում է Ռադոնեժսկին: Արդեն ուսանողական տարիներում յերևան յեկավ Դոբրոլյուբովի շիտակության գիծը, վոր հետագայում դանադան առիթներով այնքան ուժեղ արտահայտվեց, մասավանդ Ի. Ս. Տուրգենևի հետ ունեցած հարաբերություններում:

Բարձր դասնթացներում Դոբրոլյուբովի հետաքրքրություններն ու կապերը տարածվեցին նեղ ուսանողական խմբակի սահմաններից շատ հեռու: Նա ստիպված էր շփվել հասարակական զանազան խավերի ներկայացուցիչների հետ: Լինելով պրոֆ. Ի. Ի. Սերգևսկու մոտ, նա հանդիպում էր ակադեմիական գիտնականության տեղ մարդկանց, վերջին կուրսում, ծանոթանալով Չերնիշևսկու և Նեկրասովի հետ, նա մտավ «Современник»-ի գրական շրջանը: Զանազան տներում տված դասերի շնորհիվ նա ծանոթ էր և՛ չինոլիկական վոչ հարուստ ընտանիքների, և՛ ապահովված ազնվական տների հետ:

1857 թ. գարնանը Դոբրոլյուբովի ինստիտու-

տու մ հրաշալի տվեց ավարտական քննութիւննները։
Ինստիտուտի իշխանավորներն իրենց հաշիվները նրա
հետ մաքրեցին, չնայած Սրեզնեվսկու և մյուս պրո-
ֆեսորների պնդումին, նրան վռնկե մեղալ չտվին,
վորին նա լիովին արժանի էր։

Ահա այն բնութագրերը, վոր տրվեց Դոբրոլյուբովին ինստիտուտում նրա զտնված ամբողջ ժամանակաշրջանի համար: «Նիկոլայ Դոբրոլյուբով—աշխատասեր ե, պահանջկոտ, իշխանավորներին կարգադրություններին չի համակրում, կրոնական պարտականությունները կատարում ե սառնությամբ, մեծամիտ ե, ունի ամբաստանելու հակում, յենթարկվել ե կալանքի»: Ամբաստանության հակումն ասելով այստեղ, ի հարկե, ի նկատի յե ունեցված աչն, վոր Դոբրոլյուբովը միշտ պատրաստ եր համարձակ և լացահայտ կերպով պայքարելու ինստիտուտի իշխանավորության պլանդակությունների դեմ:

Հրաժեշտի պահին Դավիդովը կարողացավ Դոբրոլյուբովից նրա պատճառած բոլոր նախկին անախորժությունների համար ավելի խիստ վրեժ առնել, քան պարզապես մեղավրից զրկելն էր. նրան հաջողվեց Դոբրոլյուբովի դեմ տրամադրել նրա բարեկամների մեծ մասին: Վերջին կոնֆերենցիային քննվելու յեր Գետերբուրգի 4-րդ գեմազրիաչում Դոբրոլյուբովին պաշտոն տալու հարցը, Դոբրոլյուբովին համարյա հավատացած էր, վոր Դավիդովին այդ բանին արգելք կհանդիպանա, բայց, Սրեզնեվսկու խորհրդով, նա այնուամենայնիվ դնաց Դավիդովի հետ խոսելու, վորովհետև մինչև տուն մեկնելը հարկավոր էր պարզել իր դրոթյունը: Նա սկսեց նրանով, վոր Դավիդովին

շնորհակալություն հայտնեց կոնֆերենցիայի նախոր-
ջակին նրա հայտնած բարել կարծիքի համար: Դավի-
դովը զիտթվեց այդ բացահայտ հեղնանքից (փաստո-
րեն հայդ կոնֆերենցիային Դավիդովը պնդում եր,
վոր Դոբրոլյուբովին տան վոչ թե ավագ ուսուցչի,
այլ կրտսեր ուսուցչի կոչում, և նրան հաղիվ հաջող-
վեց համոզել): Դոբրոլյուբովի հարցին, թե ինքն ար-
դյոք կարող ե 4-րդ գիմնազիայում տեղ ստանալու
հույս ունենալ, դիրեկտորն սկսեց ըստ իր սովորու-
թյան մի «յերկար խրատածառ կարդալ», թե այդ
նշանակումը պետք ե արդարացնել վոչ միայն խել-
քով, այլև վարքով և այլն: «Խրատածառը տեեց տասը
բուպե: Դրա համար հարկավոր եր վանկային հայհոյել
և ատամները փշրել կամ զոնե շուռ դալ... և հեռանալ
աղմուկով: Բայց լես վոչինչ չարեցի, այլ լուռ լսեցի
մինչև վերջը. յես ընդունում եմ, վոր լես լավ չը վար-
վեցի և այդ բանի համար մինչև որս ել ինձ մեղա-
դրում եմ», — գրում եր Դոբրոլյուբովը:

զեռուած եմ»,—գրում էր Բոլորուցումը և
 Հետևյալ ուրը Դոբրոլյուբովը այն ընկերները
 համար, յիշոնց Դավիդովի շնորհիվ կրտսեր ուսուց-
 չի կոչում ելին ավել, նրանց խնդիրքով դիմում
 գրեց, բողոքելով անարդարության դեմ: Դավիդովը
 իմացավ, թե դիմումն ով եր շարադրել, և լուր տա-
 րածեց, թե Դոբրոլյուբովը ընկերների առաջ իրին բո-
 ղոքող ե ձեռացնում, իսկ ինքը ծածուկ գնում ե դի-
 րեկտորի մոտ շնորհակալություն հայտնելու և իրեն
 տաքուկ պաշտոն միջնորդելու համար: Դա գուտ զըր-
 պարտություն եր: Մակաչն Դոբրոլյուբովի ընկերնե-
 րից շատերը հավատացին այդ զըպարտությանը և
 նրանից բացատրություն պահանջեցին: Նրա հպար-

տությունը վրդովվեց, և նա հրաժարվեց բացատրություն տալուց: Դրանից հետո նույնիսկ նրա ամենամոտիկ բարեկամներից մի քանիսը, որինակ՝ Տուրչանինովը, Ալեքսանդրովիչը, Սցիրբոսկին, իրենց հարաբերությունը խղեցին նրա հետ:

Իր կյանքի ինստիտուտական շրջանում Դոբրոլյուբովը վերջնականապես խղեց նաև աշխարհայացքի հետ, վոր ձեռք եր բերել մանկական տարիներում, և անցավ մատերիալիստական հայացքներին և հեղափոխական համոզմունքներին: Այդ անցումը կատարվեց 1855 թվի և 1856 թվի առաջին կիսի ընթացքում: Իր այդ հայացքները մի ընդհանուրի բերելով, Դոբրոլյուբովը 1856 թվին գրում եր սեմինարական որերի իր հին բարեկամին՝ Վ. Լավրսկուն. «Յերկու տարի շարունակ չես կովում եյի հին թշնամիների դեմ, ներքին և արտաքին: Յես մարտի յեւա առանց ամբարտավանության, բայց և առանց վախկոտության,—հպարտ և հանգիստ: Յես ուզիդ նայեցի այդ խորհրդավոր կյանքի յերեսին և տեսա, վոր նա բոլորովին այն է, ինչ վոր պնդում եր հայր Պախաին և Յերեմիա սրբազանը: Պետք եր գնալ նախկին հասկացողությունների դեմ և նրանց դեմ, վորոնք այդ հասկացողությունները ներշնչել ելին: Յես նախ դնացի յերկշտությամբ, զգուշությամբ, հետո ավելի համարձակ, և վերջապես իմ սառն համառության առաջ խոնարհվեցին և՛ բոցաշունչ յերադները, և՛ իմ ջերմ թշնամիները: Այժմ յես հանգչում եմ իմ դավնիսների վրա, գիտենալով, վոր ինձ հանդիմանելու վոչինչ չկա, գիտենալով, վոր վոչնչով ինձ չեն հա-

ղիմանի նաև նրանք, վորոնց կարծիքն ու սերն ինձ համար թանգ են»:

Դոբրոլյուբովի աշխարհայացքի հիմքերը դրվեցին ինքնուրույն կերպով մինչև Չերնիշևկու հետ ծանոթանալը. վերջինս նրա հետ ունեցած հենց առաջին տեսակցության ժամանակ ապշել եր Դոբրոլյուբովի մտքի հասունության և իրենց հայացքների մոտիկության վրա, բայց աշխարհայացքի առանձին մոմենտների զարգացման վրա Չերնիշևկին աչքի ընկնող դեր ե խաղացել, և այդ իմաստով Չերնիշևկու ազդեցությունն անվիճելի յե:

1857 թ. զարնանն ինստիտուտն ավարտելով, Դոբրոլյուբովը մի ամսով մեկնեց Նիժնի-Նովգորոդ: Չնայած ազգականների և ծանոթների ցույց տված սրտաբաց ընդունելության, արդեն մի շաբաթ հետո հայրենի քաղաքում նա անտանելի ձանձրույթ զգաց, և նա սկսեց յերազել Պետերբուրգ վերադառնալու մասին: Այն միջավայրի հետ, վորից նա դուրս եր յեկել, Դոբրոլյուբովն ալևս ընդհանուր վոչինչ չուներ:

Ինստիտուտն ավարտելու ժամանակ Դոբրոլյուբովը մտածում եր պաշտպանել դիսերտացիա և ամբիոն ձեռք բերել: Ունենալով հսկայական ընդունակություններ և համառություն, Նիկոլայ Ալեքսանդրովիչի համար, ի հարկե, այդպիսի գիտավորությունն իրականացնելը զգվար չեր: Բայց այնպիսի հեղափոխական-դեմոկրատի համար, ինչպիսին Դոբրոլյուբովն եր, ահադեմիական կարյերայի ձգտումը կարող եր միայն ժամանակավոր և վաղանցուկ լինել: Համալսարանական ամբիոնի փոխարեն նա ժուռնալում անհամեմատ ավելի կարևոր ամբիոն ստացավ:

Ձերնիշկսկին, վոր լիովին գնահատեց Դորբոլյուբովին „Современник“-ում նրա զետեղած առաջին յերկու հոդվածներից հետո, նախ, վորքան հնարավոր եր նրան հետ եր պահում ժուռնալում հետագա մարնակցությունից, հասկանալով, վոր ազատամտության համար իշխանավորության առաջ շատ վատ հաշվում յեղած ուսանողի համար ուղիկալ ժուռնալին աշխատակցելը կարող է խիստ վտանգավոր լինել, բայց ուսումնա-վարտելուց հետո աչգ նկատառումը վերացավ, և Դորբոլյուբովին ամբողջովին կարող եր անձնատուր լինել գրականության: Համոզված լինելով, վոր իրենց ընդհանուր ուղղության մեջ կատարյալ համերաշխութուն է տիրում, Ձերնիշկսկին գրական-քննադատական բաժնում յերիտասարդ աշխատակցին կատարյալ ազատություն տվեց: Ն. Ա. Նեկրասովի, վորպես խմբագրի, մեծ արժանիքն այն եր, վոր նա լիովին վստահեց Ձերնիշկսկուն, յերբ նա այդքան յերիտասարդ աշխատակցին վճռականորեն առաջ քաշեց և ժուռնալում առաջին տեղերից մեկը հատկացրեց: Դորբոլյուբովին „Современник“-ի մշտական աշխատակից դառնալուց հետո Ձերնիշկսկին բոլորովին հետ քաշվեց գրական բնույթի հոդվածներ և ռեցենզիաներ գրելուց և կենտրոնացավ հասարակական-տնտեսագիտական թեմաների վրա: 1857 թվի վերջին Դորբոլյուբովը կանգնեց „Современник“-ի քննադատական բաժնի գլուխ: 1858 թվի սկզբից նա սկսեց մասնակցել նաև ժուռնալի ընդհանուր խմբագրական աշխատանքին:

Ձերնիշկսկու ընտրությունը փայլուն կերպով արդարացավ. շուտով Դորբոլյուբովի հոդվածներն

ընթերցողներին մեջ, մանավանդ յերիտասարդներին մեջ, ձեռք բերին ամենաջերմ յերկրպագուներ: Հանձին Դորբոլյուբովի հեղափոխական դեմոկրատիայի որդանն ստացավ կատարելապես բացառիկ մի քննադատ:

Դորբոլյուբովի նախաձեռնությամբ ժուռնալին կից սկսեց հրատարակվել հատուկ հազված՝ հոշակավոր „Свисток“-ը („Սուրիչը“): Դորբոլյուբովին եր „Свисток“-ի վոգեշնչողն ու չափազանց ակտիվ մասնակիցը, վոր առանձնապես կծու ծաղրում եր չափավոր լիբերալներին: Առաջնակարգ քննադատն իրեն ցույց տվեց նաև վորպես ականավոր սատիրական բանաստեղծ: Նրա մահվանից հետո „Свисток“-ը շուտով պետք է փակվեր:

Ինստիտուտն ավարտելուց հետո Դորբոլյուբովին ամբողջ կյանքն ըստ ելության հանդում և „Современник“-ի մեջ աշխատելուն, մի լարված, ուղղակի ուժից վեր աշխատանքի: Նա իրեն ամբողջովին կապեց ժուռնալի հետ և հանդիսացավ ամենակարևոր մասնակիցներից մեկն այն պայքարի, վոր նրա մեջ կատարվում եր: 50-ական թվականների վերջին „Современник“-ի ներքին կյանքում ամենակարևոր յերիվույթը տարաձայնությունն եր և առա կատարյալ խզումը աշխատակիցների յերկու խմբակների միջև՝ ազնվական խմբակի, վորի ամենաականավոր ներկայացուցիչը Ի. Ս. Տուրգենևն եր, և հեղափոխական-դեմոկրատական խմբակի, վորին գլխավորում էին Ձերնիշկսկին և Դորբոլյուբովը:

Ողումը նախապատրաստվում եր աստիճանաբար, սկսած 1856 թվից: 1858 թ. լիբերալների և դե-

մոկրատները փոխադարձ հարաբերութիւններն զգալիորեն սրվեցին: Այդ սրման արտահայտութիւններէից մեկն եր Դորբոլցուբովի վոտանավորը, վոր գրված եր Վ. Գ. Բելինսկու մահվան 10-ամյակի առթիվ կազմակերպված ճաշկերույթի առթիվ: Տուրգենևովը և Բելինսկու կենդանութիւնն որով նրան մոտիկ մշուս անձինք իրենց համարում եյին նրա միակ ուրինական հաջորդներն ու նրա գործի շարունակողները: Դորբոլցուբովը, վոր Բելինսկուն բարձր եր դասում, ըմբռնում եր մեծ քննադատի գործունեյության հեղափոխական նշանակութիւնը և տեսնում եր, թե վորքան նրա նախկին բարեկամները, չափավոր լիբերալ-ազնվականները, հեռու եյին Բելինսկու իսկական պատգամներից: Ճաշի ժամանակ ի պատիվ հանգուցյալ քննադատի նա լսեց սովորական լիբերալ շաղկերատութիւն և իր վոտանավորում խարանդ Բելինսկու կեղծ յերկրպագուներին. այդ վոտանավորն հետո նա ուղարկեց ճաշկերույթի մասնակիցներին:

1860 թվին „Современник“-ի հին մասնակիցների լիբերալ խմբակի համար „Современник“-ի հետ վերջնական խզման առիթ ծառայեց Դորբոլցուբովի հայտնի „Когда же придет настоящий день?“ հոդվածը, նվիրված Տուրգենևի „Накануне“ վեպին: Տուրգենևը, վոր հոդվածին ծանոթացավ մինչև նրա տպագրելը, այդ հոդվածն իրեն համար գտավ վերավորական և Նեկրասովից պահանջեց, վոր հոդվածը „Современник“-ում լույս չտեսնի, գնելով ուղտիմատում՝ ընտրել իրեն կամ Դորբոլցուբովին: Գործը հարթեւում մի քանի փորձերից հետո Նեկրասովը ընտրու-

թիւն կատարեց. Չերնիշևսկուն և Դորբոլցուբովին նա նախընտրեց Տուրգենևի խմբակից, չնայած այդ խմբակի հետ ունեցած իր հին անձնական կապերին: Դրանով նա փրկեց „Современник“-ը վորպես իր ժամանակվա ամենաառաջավոր որդանը:

Հեղափոխական դեմոկրատներից ազնվական-լիբերալների համար առանձնապես անընդունելի և ուղղակի ատելի յեր Դորբոլցուբովը: Հայտնի յե Տուրգենևի բազմիցս կրկնվող ասույթը, թե Չերնիշևսկին հասարակ ոճ ե, իսկ Դորբոլցուբովը՝ ակնոցավոր ոճ: Այդպիսի վերաբերմունքը դեպի Դորբոլցուբովը Չերնիշևսկին բոլորովին ճիշտ բացատրեց նրանով, վոր վերջինս բոլորովին ընդունակ չեր կոմպրոմիսների և զիջումների և անշեղ շիտակությամբ արտահայտում եր իր կարծիքները: «Դրականության համար ինձ ոգտակար եր թվում, — ասում եր Չերնիշևսկին, — վոր վորեւեւ ազնիվ բանի քիչ թե շատ համակերելու ընդունակ գրողներն աշխատեյին իրար հետ անձնական յերկպառակութիւններ չունենալ: Այս խնդրի նկատմամբ Դորբոլցուբովը այլ կարծիքի չեր: Նրան թվում եր, թե վատ դաշնակիցները դաշնակիցներ չեն»:

Դորբոլցուբովը խորապես ցնցված եր, յերբ 1859 թվի հունիսին իր ձայնը միացրեց „Современник“-ի խմբագրության հեղափոխական մասի թշնամիներին նաև Գերցենը, տպագրելով իր „Колокол“ արտասահմանյան հրատարակության մեջ „Очень опасно“ վերտառությամբ աղմուկ հանած հոդվածը. այդ հոդվածը Գերցենի քաղաքական ամենամեծ սխալներից մեկն եր: Հարձակվելով „Свисток“-ի սատիրական ուղղության վրա՝ Գերցենը հասավ անհեթեթ յեղրա-

կացութեան, թե այդ ուղղութեանը կարող ե ձեռնտու լինել կառավարութեան համար: Դա հարված եր մի մարդու կողմից, վորի առաջ Դորբոլյուբովն առաջ խոնարհվում եր. այդ խոնարհումն ժամանակի ընթացքում փոխվեց խիստ քննադատական վերաբերմունքի, բայց համենայն դեպս այդպիսի կարծիքներ, ինչպիսին արտահայտվեց Գերցենն իր հոդվածում, Դորբոլյուբովը բոլորովին չեւ սպասում: «Սակայն լավ են մեր առաջավոր մարդիկ.—վերջովված գրում ե նա իր «Որադրում»:—Արդեն կարողացան իրենց մեջ մեռցնել այն հոտառութեանը, վորով առաջ զգում եին հեղափոխութեան կոչը, վորտեղ ել վոր այն լավեր ե ինչ ձեերով ել վոր յերևան գար: Այժմ արդեն նրանց մտքում խաղաղ պրոգրեսն ե, ըստ վորում նախաձեռնութեանը լինելու յե վերից, որինականութեան քողի տակ»: Սեփական ուժի մեծ գիտակցութեամբ ելին հնչում այն բառերը, թե՛ «Յես անձամբ Գերցենի անբարեհաճութեամբ ինձ շատ ել ջախջախված չեմ զգում, վորի հետ կարող եմ չափվել, յեթե գործն այդտեղ հասնի»:

„КОЛОКОЛ“~ի հոդվածի առաջին տպավորութեան տակ Դորբոլյուբովը նույնիսկ պահանջ եր զգում անձամբ մեկնել Լոնդոն Գերցենի հետ բացատրվելու: Ինչպես հայտնի չե՛ Դորբոլյուբովի փոխարեն Գերցենի ե Ոգարեվի հետ բացատրվելու գնաց Ն. Գ. Չերնիշևիչին, վոր 1859 թվի հունիսի վերջերին գտնվում եր Լոնդոնում:

Ամբողջովին անձնատուր լինելով „Современник“~ում կատարած աշխատանքին, վորի հիմնական իմաստը նրա համար կազմում եր գյուղացիական հե-

ղափոխութեան կոչը, Դորբոլյուբովն ապրում եր տրամադրութեան վերեւըներ ե անկումներ, կախված շրջապատող հասարակական իրադրութեանից: 1858 թվին նրա մեջ գերակշռող ե հանդիսանում ընկած տրամադրութեանը, վորը նրան յերբեմն հասցնում եր կատարյալ անբավականութեան իր գործունեութեանից:

Բայց անհուսութեան նոթերը Դորբոլյուբովի մոտ միայն ժամանակավոր տրամադրութեան արդյունք ելին հանդիսանում: Բոլորովին այլ ե Դորբոլյուբովի տոնը 1859 թվին: Նրա ուժերի վերելքի մասին ե խոսում այդ ժամանակ արդեն այն, վոր հենց 1859 թվին նա գրեց մի ամբողջ շարք առաջնակարգ նշանակութեուն ունեցող հոդվածներ, համակված հեղափոխական հղոր, մարտական տրամադրութեամբ: Դորբոլյուբովի բարոյական տրամադրութեան մեջ այդ փոփոխութեանն առաջացնող հիմնական պատճառն հանդիսանում եր 1859 թվին գյուղացիական շարժման զգալի ուժեղացումը: Այն թույլ եր տալիս հուսալու, վոր Ռուսաստանի համար կա իր այդ գրութեանից դուրս գալու յելք, վոր մոտ ե գյուղացիական լայն հեղափոխութեանը: Դորբոլյուբովն այդ ժամանակ հեղափոխական յերիտասարդութեան բացառիկ դերի վրա դրած իր հույսերից անցնում եր գյուղացիական մասսաների ապստամբութեան հույսերին:

Գյուղացիական հեղափոխութեան մոտիկութեան հավատը Դորբոլյուբովի համար բնավ չեւ նշանակում, թե ինտելիգենցիան այդ հեղափոխութեանն սպասելու չե ծալած ձեռքերով: Ընդհակառակը, նա համակված եր ջերմ համոզմունքով, վոր հեղափոխական յերիտասարդութեան համար անհրաժեշտ ե խտացնել իր

շարքերը և ամենագործոն կերպով պատրաստվել ապագա գյուղացիական շարժմանը մասնակցելու համար:

Ընկերներին գրած նամակներում Դոբրոլյուբովը ամենից առաջ ձգտում է համոզել նրանց, վոր աղնիվ մարդիկ չպետք է ձեռնորդ ծալած նստեն, այլ պետք է գործեն: Հենց նույն Շեմանովսկուն, վորին գրանից մի տարի առաջ Դոբրոլյուբովը գրում էր յերիտասարդ սերնդի անգործության մասին, այժմ նա համոզում է, վոր կան շահեր, վորոնք կարող են և պետք է գրավեն նրանց ամբողջ եյությունը և իրենց կրակով լուսավորեն նրանց ամբողջ խավար և սառն խղճուկ կյանքն այս աշխարհում: Այդ շահերը պարփակված են հասարակական գործունեություն մեջ: Յեթե Ռուսաստանում աղնիվ և զարգացած մարդու գործունեության համար հող չկա, ապա նրանք իրենց բոլոր ուժերն այդ կողմն ուղղելով պետք է այդ գործունեությունն ստեղծեն: Բավական է հաստատվելու ընդունած և համաձայնություն չիկած հարյուր մարդ, և այդ գործունեությունը կստեղծվի:

Դոբրոլյուբովը նույնն է գրում նաև Բորգյուլգովին. «Փորձիր, ուրեմն, գիտակցորեն խորասուզվելու այդ յեռացող ջրապտույտի մեջ, վոր մենք անվանում ենք մտքի և համոզմունքի կյանք, համակրանք դեպի հասարակական շահերը և այլն: Կարելի չէ և ավելի կարճ անվանել, բայց դու առանց դրան ել հասկանում ես, թե յես ինչի մասին եմ խոսում»:

Կարելի չէ պարզ հասկանալ, վոր Դոբրոլյուբովը ի նկատի ունի հեղափոխությունը և նրա նախապատրաստումը: Իրենց ընկերների վուզին բարձրացնելու և ընդհանուր գործի մեջ նրանց մտեցնելու

ցանկությունն նույն նպատակն են լսվում նաև Դոբրոլյուբովի 1859 թ. մյուս շատ նամակներում: Իր սեփական գրական գործունեություն մասին նա այժմ այլ ձևով է գրում, քան առաջ: «Դրիր ավելի „Современник“-ի մասին, նրա թողած տպավորություն, նրա բացերի մասին և այլն: Նա ինձ համար ավելի ու ավելի չե դառնում իսկական գործ, ինձ համար միս ու արյուն դառնում: Դու ի հարկ ե հասկանում ես, թե ինչի՞նչ: Դժվար չե հասկանալը, թե Դոբրոլյուբովը ինչն է նկատի ունի. „Современник“-ում աշխատելը նրան հնարավորություն էր տալիս իր հեղափոխական տրամադրությունները տարածել ինտելիգենցիայի լայն շրջաններում:

Դոբրոլյուբովը, վոր իր գավառական բարեկամներին համոզում էր համախոհներ գտնել և նրանց հետ կապերն ամրացնել, ինքը Պետերբուրգում հենց այդպես էլ վարվում էր: 1859 թվին են վերաբերում այդպիսի մի շարք տեղեկություններ—հասկանալի պատճառով շատ խուլ տեղեկություններ: Նա Բորգյուլգովին գրում է. «Յես հիմա շատ գոհ եմ, չգիտեմ, թե ինչից: Գուցե նրանից, վոր յերեկ ժամը տասից մինչև յերկուս և կեսը նստած եյի մի խանդավառ պարոնի մոտ և, ուրիշ հինգ կամ վեց հոգու հետ միասին, խոսում եյինք այն բանի մասին, ինչ վոր այժմ ինձ համար այնքան թանգ է և վորի մասին մենք քեզ հետ ել խոսել եյինք: Յես իմ այդ մտքի մեջ ավելի յեմ հաստատվում»: Հեղափոխական տրամադրություններ մարդկանց վորոնումը միշտ չեք հաջողություններ վերջանում: Մոտ որբերս ծանոթացա Զինվորական ակադեմիայի մի քանի սպաների հետ և յեղա

մի քանի լեհերի մոտ, վորոնց առաջ հանդիպում եյի Ձերնիշևսկու մոտ: Այդ բոլոր մարդիկ, կարծես, լաֆն են, բայց բավականաչափ լուրջ չեն»: Կամ. «Իսկ մարդիկ այնքան քիչ են, այնքան քիչ, վոր կարծես համարյա բոլորովին չկան: Վերջին որերս յես գտա հինգ-վեց նոր ծանոթներ, բայց մինչև որս միայն մեկն ինձ կարգին մարդ է թվում: Մյուսները ժամանակակից լիբերալիկներ են»:

Հեղափոխական գործի և վոչ թե միայն լիբերալ կամ ռադիկալ բառերի ընդունակ «իսկական մարդիկ» գտնելու դժվարությունն զիտակցությունը չեր մեռցնում Դոբրոլյուբովի հեղափոխական հենքերին: «Հատված 1859 թվի որագրից»-ը վերջանում է այսպիսի բառերով. «... Զ., Ո., և Ս.-ի կողմից միայն այստեղ յես իսկական համակրանք գտա: Ճիշտ է, կան նաև Ն., Ս., Դ.—բայց ով գիտե, թե նրանք ինչ մարդիկ են: Համեմատյա դեպս, մենք քիչ ենք, լեթե մենք յոթն ենք, ապա մենք կաղմում ենք ռուս ազգաբնակչության մեկ միլիոններով մասը: Բայց յես համոզված եմ, վոր շուտով մենք կշատանանք...»:

Դոբրոլյուբովի ուժերն ինչքան ել վոր շատ ելին ծախսվում նրա լարված գրական գործունեությունից: Վրա, վորը նրա համար անխզելիորեն կապված էր հեղափոխության սպասելիքների հետ, այնուամենայնիվ դեռ մնում էր և անձնական կյանքը: Վաղ լերիտասարդության որերին Դոբրոլյուբովը մի ժամանակ կարծում էր, թե նա «ապրել է իր ցանկությունները և դադարել է իր յերազները սիրելուց» և պաղարչուն Կատոնի նման դուրս կգա հասարակական գործունեության ասպարեզ: Կյանքը շուտով նրան

ցույց տվեց, վոր դա միայն գրքային վերացական նություն էր: Յեվ ինստիտուտական ժամանակաշրջանում, և՛ հետո Դոբրոլյուբովը շատ բաներով հափըջտակվեց: Նա լերագում էր, վորպես մեծ յերջանկություն, կնոջ սիրո մասին, բայց այնպիսի կնոջ, վորը կարողանար մասնակից լինել նրա ձգտումներին: Այդ յերջանկությունը նա չտեսավ, նրա մղումներն անպատասխան ելին մնում:

Ինստիտուտն ավարտելուց հետո Դոբրոլյուբովն արտաքինից ապրում էր լիովին բավարար պայմաններում: Նրա ամենամերձավոր մարդկանցից, բացի Ձերնիշևսկու բնտանիքից, առանձնապես պետք է հիշատակել, Ն. Ս. Նեկրասովին և նրա կնոջը՝ Ա. Յա. Պանայովին: 1858 թվի աշնանից նա մի տարի ապրում էր մի տան մեջ Նեկրասովի և Պանաևայի հետ, վորը Դոբրոլյուբովի կյանքի պայմանների նկատմամբ ընդհանրապես մեծ հոգատարություն ցուցաբերեց:

Դոբրոլյուբովի աշխատանքի ծանրությունը, վորի ժամանակ նա, վորպես կանոն, մինչև գիշերվա ժամի 4-ը նստում էր կարդալու կամ գրելու, շուտով իրեն զգալ տվեց: Դոբրոլյուբովը բոլորի վրա անառողջ մարդու տպավորություն էր թողնում: 1858 թվի ամառը նա ստիպված էր անցկացնել Ստարայա Ռուսայում, վորտեղ բուժվում էր գեղձախտից: Դա զարգացող թոքախտի առաջին արտահայտությունն էր: Խմբագրական գործերի պատճառով հետևյալ ամառը նա ապրեց Պետերբուրգում, սաստիկ աշխատելով: Բժիշկներն սկզսեցին պնդել, վոր նրան անհրաժեշտ է մեկնել արտասահման Դոբրոլյուբովը լերկար ժամանակ պատրվակներ էր գտնում այդ բանից խուսափելու համար,

բայց վերջիվերջո պետք է զիջեր իր մերձավորների պնդումին, մանավանդ Նեկրասովի և Պանաևայի։ Գործի դրամական կողմը Նեկրասովին այնպես տնտրինեց, վոր Դոբրոլյուբովը կարողանար գնալ, առանց իրեն անհրաժեշտ միջոցների մասին մտածելու։

1860 թվի մայիսի վերջին Դոբրոլյուբովը մեկնեց արտասահման։ Նա գիտակցեց իր դրության լըրջությունը։ «Արտասահման գնացի պատանքի համար»,—գառնությամբ գրում էր նա մի նամակում։

1861 թվի ամառը, առանց կաղերվելու, Դոբրոլյուբովը վճռեց ծովով վերադառնալ Ռուսաստան։ Ողեստայում նրա կոկորդից արյուն հոսեց։ Մի փոքր սպասելով՝ նա ճանապարհը, վոր շատ հոգնեցուցիչ էր, շարունակեց, մտավ Մոսկվա, Նիժնի-Նովգորոդ, Վլադիմիր և ոգոստոսի կիսին հասավ Պետերբուրգ։

Ճանապարհորդության ընթացքում Դոբրոլյուբովի պարտքը «Современник»-ին հասավ զգալի գումարի՝ 4.000 ռուբլու։ Այդ պարտքը վորքան կարելի է շուտ ծածկելու համար Դոբրոլյուբովին իսկույն անցավ աշխատանքի, թեև նրանից մոտակա ժամանակներում այդ փողերը վերադարձնել չէին պահանջում։ Նա աշխատում էր մաքսիմալ լարվածությամբ, վորովհետև բացի ժուռնալների համար մի քանի հոգվածներ գրելուց, նա նաև փոխարինում էր արձակուրդ գնացած Չերնիշևսկուն։

Դրանք վերջին ճիգերն էին։ Սեպտեմբերի վերջին Նիկոլայ Ալեքսանդրովիչը անկողին ընկավ։ Նա խնդրեց Ա. Յա. Պանաևային, վորն այդ ժամանակ արտասահմանումն էր, վերադառնալ Պետերբուրգ, վոր և նա կատարեց։ Մեծագույն հոգատարությամբ նա հիվանդին խնամում էր։

Մինչև վերջը Դոբրոլյուբովը չէր դադարում հետաքրքրվել նրանով, ինչ վոր կազմում էր նրա կյանքի գլխավոր բովանդակությունը։ Վ. Որբուչևի հիշողություններում պահպանվել է մի այսպիսի պատմություն։ Դոբրոլյուբովի հիվանդության ժամանակ Նեկրասովը գյուղից վերադարձավ։ Այդ վերադարձից հետո Որբուչևի հետ տեսակցելիս Դոբրոլյուբովը վերջինիս ասաց, վոր, ըստ Նեկրասովի գյուղում ֆալուց ստացած տպավորության, «վոչինչ չի լինի»։ Այդպես մահվան մահճումն էլ նրան չէր դադարում հուզել գյուղացիական հեղափոխության հնարավորության հարցը։

Գրող Ն. Վ. Շելգունովը Դոբրոլյուբովի մահվանից յերեք-չորս օր առաջ նրա մոտ էր և պատմում էր գրող Մ. Ի. Միխայլովի ձերբակալման և ուսանողական հուզմունքների հետևանքով առաջացած գրող-ուղևորների մասին։ «Յես հապճեպ հաղորդում ելի Դոբրոլյուբովին այդ դործի մի քանի մանրամասնությունները, և նա մի փոքր բարձրանալով բազմոցի վրա, վորի վրա պսակած էր, նախում էր ինձ, բայց արգեն վոչ աստվածների անշարժ հայացքով։ Նրա չքնաղ, խելոք աչքերը վառվում էին, և նրանց մեջ փայլում էր այն լավագույն ապագայի հույսն ու հավատը, վորին ծառայելու համար նա տվեց իր լավագույն տարիներն ու իր լավագույն ուժերը»։ Միայն այն մարդը, վորի համար հեղափոխությունն իր սեփական, իրեն համար մի ու արյուն դառած գործն էր, կարող էր, բոլորովին մեռնելով, այդպես լսել հաղորդումը հասարակական հուզմունքի մի քանի նշանների մասին։

Յերկար ժամանակ Նիկողայ Ալեքսանդրովիչը կազդեռութիւն հուշը չեր կորցնում, միայն մահվանից առաջ վերջին յերկու-լերեք որերին նա այդ հուշը կորցրեց: Դրանք հոգեվարքի ծանր թախիծի որերն էին, յերբ յերիտասարդ կյանքը բողոքում եր անիմաստ վախճանի դեմ: Այդ որերին Դորբոլյուբովը, բացի Չերնիշևսկուց և Պանսևայից (չհաշված յեղբայրներին, վորոնց բերում էին նրա մոտ նրան հրաժեշտ տալու համար), վոչ վոքի տեսնել չեր ուզում: Դորբոլյուբովը մեռավ Չերնիշևսկու և Պանսևայի ձեռքերի վրա հին տոմարով նոյեմբերի 17-ին, իսկ նոր տոմարով նոյեմբերի 29-ին, 1861 թվին: Նա 25 տարեկան էր:

Այն ցնցող տպավորութեան մասին, վոր թողեց Դորբոլյուբովի մահը իր մոտիկ մարդկանց վրա, պատկերացում են տալիս Չերնիշևսկու նամակի հետևյալ խոսքերը. «Յերբ ձեզ հետ կտեսնվենք, կհամբուրվենք և կարտասվենք մեր բարեկամի վրա... Ահա արդեն հազվադեպ որ ե լինում, վոր յես առանց արցունքների անցկացնեմ... Յես ել ոգտակար մարդ եմ, բայց ավելի լավ եր յես մեռնեյի, քան թե նա... Ռուս ժողովուրդը նրանով կորցրեց իր լավագույն պաշտպանին»:

Նոյեմբերի 20-ին Վոլկովուչի գերեզմանատանը տեղի ունեցավ Դորբոլյուբովի համեստ թաղումը: Նրա դագաղի հետևից գնում եր յերկու հարյուր մարդ, առավելապես գրականագետներ: Գերեզմանի վրա ձառեր ասացին Չերնիշևսկին, Նեկրասովը, Մ. Ա. Անտոնովիչը, Ն. Ա. Սերնո-Սոլովյեվիչը և ուրիշները: Նրանք աշխատում էին ընդգծել Դորբոլյուբովի կյանքի և գործունեութեան հասարակական իմաստը:

25-ամյա Ն. Ա. Դորբոլյուբովի մահը առանց գրականութեան ամենացավալի կորուստներից մեկն է, թեև նրան ծանոթ են բավականաչափ վաղաժամ մահեր: Անչափ շատ բան կարող եր տալ այդ բացառիկ մարդը, վոր կարճ ժամանակվա ընթացքում կարողացավ դառնալ հեղափոխական-դեմոկրատական քննադատութեան հանրաճանաչ պարագլուխը:

Բայց խոսելով այդ չիրականացված հնարավորութիւնների մասին, անհրաժեշտ ե ի նկատի ունենալ մի շատ եյական վերապահում. Դորբոլյուբովը գրականութեան ասպարիզում կկարողանար տալ այն բոլորն, ինչի վոր նա ընդունակ էր, այն դեպքում, յեթե նրան չխանգարեր ցարական կառավարութիւնը: Չափազանց ակներև ե, վոր այդպիսի հնարավորութիւն լինել չեր կարող: Դեռ ևս Դորբոլյուբովի կենդանութեան ժամանակ ձերբակալեց բանաստեղծ Մ. Ի. Միխայլովը, նրա մահվանից չոթ ամիս մի քիչ ավելի անց ձերբակալեց Ն. Գ. Չերնիշևսկին: Նրանց յերկուսին ել, իբրև «պետական հանցագործների», ուղարկեցին տաժանակիր աշխատանքի, և այնտեղ նրանք ակամայից լռեցին: Կասկած չկա, վոր Դորբոլյուբովին ել նույն վիճակն եր սպասում: Բոլորի համար ել խիստ ակներև եր, վոր նա իր գրական գործունեութեամբ կոչում եր դեպի հեղափոխութիւն: Նրա անվեհեր հետևողականութեան և մտածողութեան ու գործելակերպի շիտակութեան առաջ խոնարհվում եր ինքը Չերնիշևսկին, — և այդպիսի մարդը չեր, վոր պիտի կարողանար փրկվել այն ժամանակ, յերբ կառավարութիւնն սկսել եր ջախջախել իր թշնամիներին: Յարական պահնորդները չափից ավելի ուշա-

դիտությամբ եյին հետևում Դոբրոլյուբովի գործու-
նեյությանը և ավաստացին, վոր ճշա մեռալն:

Բայց և այն, ինչ վոր կալողացալ տալ Դոբրո-
լյուբովը, մի հսկայական և թանգադին ավանդ և ուն-
ասց քննդատության և հեղափոխական մաքի մեջ:
Յերիտասարդության հետագա մի շարք սերունդների
համար, վորոնք իրենց խմբակներում Չերնիշևսկու և
սոցիալիստական մլուս իդեոլոգների գրվածքների
հետ միասին կարդում և ուսումնասիրում եյին Դոբ-
րոլյուբովի հողվածները, Դոբրոլյուբովը հեղափոխու-
թյան ուսուցիչ եր:

Տեթ. խմբադիր՝ Ան. Գառնարյան
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան
Կոնտրոլ-սրբագրիչ՝ Յե. Տ.-Մինասյան

Գլավխիտի լիազոր՝ Վ. 2062. Հրատ. № 4692

Պատվեր 590. Տիրամ 4000.

Թուղթ 72×105. Տպագր. 3 մամ.

Մեկ մամուլ 25,600 նշան

Հանձնված և արտադրության 14 հուլիսի 1938 թ.

Ստորագրված և տպագրության համար 7 օգոստոսի 1939 թ.

Պետհրատի I տպարան, Է. Երեան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0320144

ԳԻՆԸ 60 ԿՈՊ.

15016

КЛЕВЕНСКИ

Добролюбов

Гиз Арм. ССР, Ереван, 1939 г.